

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Յիսնակի Պահք

Յիսնակի պահքը կը սկսի Սուրբ Ծննդեան տօնէն հիսուն օրեր առաջ: Հայ Առաքելական եկեղեցոյ ծիսակարգին մէջ տարուայ ընթացքին մօտաւորապէս կէսը պահք են, որոնք բաժնուած են օրական պահքի, շաբաթական պահքի եւ քառասնօրեայ կամ Մեծ Պահքի՝ նախատեսուած ըլլալով ապաշխարելու նախքան մօտեցող տօնը: Առաքելներէն մեզի եկած կանոնին համաձայն՝ տարուայ ընթացքին շաբաթուայ չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը օրապահք են, բացի Ս. Զատիկէն մինչեւ Համբարձման տօնը ինկող բոլոր ժամանակաշրջանը: Քրիստոսի մատնութեան ի յիշատակ չորեքշաբթի օրը պահք կը բռնէ եկեղեցին, իսկ ուրբաթ օրը՝ ի յիշատակ Քրիստոսի խաչելութեան: Շաբաթապահք կը կոչուի այն պահոց օրերը որորնք կը բռնէն ամբողջ շաբաթը՝ երկուշաբթիէն մինչեւ ուրբաթ: Շաբաթապահքը կը նախորդէ եկեղեցական մեծ եւ աւագ տօներուն, ինչպիսին է Այլակերպութեան տօնը, վերափոխման տօնը, Վարագայ Սուրբ Խաչի եւ այլ մեծ տօներ:

Նոյն ձեւով որ Ս. Յարութեան տօնին նախորդող քառասուն օրերը ունի Քառասնօրեայ Մեծ Պահքի շրջանը, այդպէս ալ քրիստոնէութեան սկզբնական ժամանակներէն հաստատուած կարգ է Յիսնակի Պահքը: Ս. Ծննդեան տօնէն հիսուն օրեր առաջ կը սկսի Յիսնակի Պահոց շրջանը, որը նաեւ ինքնին կ'ընդգրկէ շաբաթապահքեր:

Պահքի օրերուն նախորդող կիրակի օրերը բարեկենդան կը կոչուին, որ կը նշանակէ բարի կենդանութիւն, բարի կեանք:

